

գիետ եկելոցն: Եւ զի քէպէտ այժմ խնդայ
 հոգին չարութեան ընդ յառաջումն իւրն
 գործառնութեան, որով կայ տրտմեալ Հո-
 գին սուրբ, զոր հրամայէ սրբազանն ոչ
 տրտմեցուցանել, եւ ընդ լինել խաղաղու-
 քեան եւ հաշտութեան, յայնժամ մնայ զը-
 խակոր եւ յամօթալից լեալ արտահալած ի
 քրիստոսականն սահմանէ՝ քշնամին արդա-
 րութեան, եւ առ այս ուրախացեալ ցնծայ
 Հոգին սուրբ: Ուստի եւ հաւատամ յԱստ-
 ուած՝ զանց առնել մերովք գործեցելովք,
 պարգեւելով շնորհս առատս առ ի բժշկու-
 քին նմին վիրաց ըստ գրոյն. Ուրանօր լի-
 նելութիւն առաւելութեան մեղացն՝ անդա-
 նօր եւ յանախումն շնորհաց. այս այսպէս
 եւ վասն այնորիկ: Բայց է եւ այլինչ բա-
 զում խորհուրդ եւ բան, զոր ի սիրակերտ
 եւ ի ցանկալի տեսութեան ցուցցուք հաս-
 տատելով զպայմանն Քրիստոսի, որ է նոյն-
 ինքն խաղաղութիւն եւ սէր. ըստ այնմ՝ թէ
 Աստուած սէր է եւ որ կայ ի սէր նորա՝ մնայ
 յաւիտեանս յաւիտենից: Ողջ լեր քոյով
 ամենեւումք ի խնամս Տեառն Յիսուսի
 յարագուարն բերկրանօք: Գրեցաւ ի քվին
 ՌՃԺԶ (= 1667) յամսեանն սեպտեմբերի
 իդ. ի մայրաքաղաքն Ստամպոլ ի դուռն
 Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն:

Այլ արդ ի վերայ այնց գրեցելոց գե-
 րազանցապէս ընտրելի եղեւ, երկոքեանս
 այսոքիկ տեղի, այսինքն՝ կամ ի Կոստանդ-
 նուպօլիս եւ կամ ի Զմիւռին պատահիլ
 միմեանց առ այս գործ: Որոց պատճառ է